

ԽԱՂՈՂԻ ՀՅՈՒԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ
ԶԱՆԱԶԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՆԵՐ
ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

36
16

29.6
36

70.6

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ի ՄՆԵԳԱՐԴՈՂԿՈՄՍՏԻ ԱՅԳԵ-
ՊՏՂԱԲՈՒԾԱԿԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՍԵՆԵԿՑԻՈՆ ԿԱՅԱՆ
Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ս Ե Ր Ի Ա № 11

6445
3-18

Ն. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄՏՈՒԿԱԾ Է 1961 Ձ.

ԻԱՂՈՂԻ ՀՅՈՒԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ
ԶԱՆԱԶԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՆԵՐ
ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

3062

II
A 19394



Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Տ
Ե Ր Ե Վ Ա Ն 1948

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆԳՐԱՆ՝

Ն. Ն. Պրոսոսերդով (բիւլղ. գիտ. դոկտոր)

Ս. Ա. Մելնիկ (պրոֆեսոր)

Մ. Հ. Մալխասյան (գյուղատնտ. գիտ. բեկն. դոցենտ)

Ընդն. խմբագրութեամբ՝ պրոֆ. Ս. Ա. Մելնիկի

Պատ. խմբագիր՝ գյուղատնտ. գիտ. բեկն. դոց. Մ. Հ. Մալխասյան

1950/11

ՆԵՐՍԾՈՒԹՅՈՒՆ,

Պաղողի հյուսիս իր բարձր շաքարայնութեան և համի հիանալի հատկութիւններէ շնորհիվ պատկանում է լավագուցն սննդամթերքների թվին:

Պաղողի հյուսիսը սոսկ որպէս այգալիսին օգտադործելը՝ վաղուց ի վեր հայտնի է եղել, թե՛ առանձին աշխատալորների կենցաղում և թե՛ սանատորիաներում, հանգստի տներում, բուժական ու սպորտային կազմակերպութիւններում:

Սակայն խաղողի հյուսիսը սոսկ որպէս այգալիսին չէ, որ կարող է օգտադործուիլ. այն հիանալի ելանյութ է այնպիսի բարձր սննդարժեք ունեցող մթերքների պատրաստման համար, ինչպիսիք են՝ մուրաբաները, սիրոպները, խաղողի կոնցենտրատները, կոմպոսները և այլն:

Անցյալ տարիների մեր փորձերը ցույց տվին, որ անալիզով մի շարք սննդամթերքների պատրաստման դործը միանգամայն հնարաւոր է՝ շաքարի փոխարեն դործածելով խաղողի հյուսիսը:

Ռաֆինադ շաքարի (ճակնդեղից) բացակայութիւնը՝ հաջողութեամբ կարելի է փոխարինել խաղողաշաքարով, որը մթերքներին առանձնապէս հաճելի, խաղողի սորտին հատուկ համ ու հոտ է տալիս:

Մուսկատային սորտերի խաղողի հիանալի արոմատը, տեղական սորտերից Պարջու, Մսխալու խաղողների քնքշութիւնը, դրանց հյուսիս դուրեկանութիւնն ու սննդարարութիւնը զգալի չափով պահպանուում է նաև խաղողահյուսից պատրաստված մթերքների մեջ:

Այս ամենը միանգամ չէ, որ մատնանչվել է, և առիթ է ծառայել աշխատալորութեան կողմից բարձր զնահատելու խա-

դողի հյուսիսն ու նրանից պատրաստված աննդամթերքները: Դրա համար էլ միանդամայն հասկանալի է մեր ցուցաբերած հետաքրքրութիւնը խաղողի հյուսիս ուսումնասիրութեան նկատմամբ, քանի որ այն փոխարինում է շաքարը նաև ուրիշ շատ դեպքերում, երբ հիմնական հումք են հանդիսանում ո՛չ միայն խաղողի պտուղները, այլ ուրիշ շատ մթերքներ:

Մասնավորապես ներկայումս, հայրենական սրատերազմի ժամանակաշրջանում միտոնդամայն հասկանալի է ռաֆինադ շաքարի փոխարինման անհրաժեշտութիւնը, այլ շաքարով՝ խաղողաշաքարով:

Մեր հերոսական կարմիր Բանակն ու աշխատավոր բնակչութիւնը թեկուզ պատերազմի պայմաններում չպետք է այնպիսի մթերքների պակասութիւնը դրան, որոնք շաքարով են պատրաստվում:

Ճակնդէղի շաքարի այնպիսի մի փոխարինող, որը կարողանա լուծել ոտեղծված ժամանակավոր դժվարութիւնները, մենք համարում ենք խաղողի հյուսիս՝ նամանականդ ալգեկործական առիթներում:

Հալատացած լինելով, որ խաղողի հյուսիս կարող է հաջողութեամբ օգտագործվել մատնանշված նպատակի համար, ուստի մենք գրառվել ենք նրանով զանազան աննդամթերքներ պատրաստելու փորձերով:

Այդ փորձերի արդյունքներն էլ հենց կազմում են ներկա աշխատութեան բովանդակութիւնը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԹՈԳԻԿԱՆ

Մեր հետադրուությունների խնդիրն էր հետևյալ անդամ-
աթիւքների պատրաստումը խաղողի հյութով:

1. Մուրաբա դեղնաչլորեց, սերկեպիլեց, դդումեց, հոնեց և
բալեց:

2. Շաքարածո (шукат) դդումեց և սերկեպիլեց:

3. Կոմպոտ դդումեց:

Մուրաբա, չաքարածոներ և կոմպոտներ ստանալիս, փոր-
ձարկիվել են պատրաստման դանաղան եղանակներ:

ՄՈՒՐԱԲԱ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

1. Խաղողեց մուրաբա պատրաստելիս այն նախապես մշակ-
ման ենթարկիվեց ստորև նկարագրված երկու եղանակով.

1. Խաղողի ողկույցները մինչ մամլելը ծծումբով դոնաղերծ
արվեցին: Այդ նպատակով մեկ կիլոգրամ խաղողի համար դոր-
ծածիկեց մեկ դրամ ծծումբ: Խաղողի մշակման պրոցեսը տեղի
ունեցալ խնամքով ծածկված արկղներում և տեւեց մեկ ժամ:

2. Խաղողի ողկույցները 2—3 վայրկյանով ընկղմեցինք Է-
ռացոլ ջրի մեջ: Մշակման այդ եղանակները դործադրելուց հե-
տո խաղողի ողկույցները, ինչպես նաև կոնտրոլ նմուշները
(չմշակվող), հետադաշտւմ մամլեցինք խաղողի հյութ ստանա-
լու համար:

Ստացված հյութի դանաղան վարխաններից մուրաբա պատ-
րաստեցինք: Գրոս համար հիշյալ տեսակի պտուղները վամ բան-
ջարեղենի մեկ կիլոգրամին վերցրինք մեկ լիտր խաղողի հյութ
խտացրած մինչև 42 տոկոս չաքարայնութեամբ:

Մուրաբան պատրաստեցինք հետևյալ եղանակով:

ՄՈՒՐԱԲԱ ՍԱԼՈՐԻՑ

Մալորից մուրաբա եփելիս մաշկը հանվում էր ոչ թե դանակով, ինչպես այդ սովորաբար ընդունված է, այլ եռացող ջրի մեջ խաշելու միջոցով: Այդ նպատակով չմաշկված սալորները 4—5 բուլետով սուզում էինք եռացող ջրի մեջ, որից հետո մաշկը հեշտութեամբ անջատվում էր ձեռքով: Մաշկից մաքրված սալորներն այնուհետև 5 բուլե (ամենաչափը 15 բուլե) դրվում էին սառը ջրի մեջ՝ պաղամիսը սեանալուց խուսափելու համար:

Մեկ կիլոգրամ սալորին վերցվում էր մեկ լիտր խաղողի հյութ խտացված մինչև 42% շաքարայնութեամբ: Հիշյալ խտութեամբ հյութը սոսքացնում էինք մինչև եռալը, ապա եռալու ժամանակ նրա մեջ լցնում սալորները, որից հետո հյութը վերցնում էինք կրակից ու 2 ժամվա ընթացքում պահում մինչև հյութի սառչելը: Այնուհետև հյութը սալորներին հետ միասին նորից դնում էինք կրակի վրա և այդպես եփում, մինչև որ սալորի պտուղները յուրահատուկ փայլ ստանան:

Մուրաբա պատրաստելու այդ եղանակը թեևադրվում էր պտուղներն ամբողջական վիճակում պահելու անհրաժեշտութեամբ:

ՄՈՒՐԱԲԱ ՍԵՐԿԵՎԻԼԻՑ

Այս դեպքում պտուղները վերցրինք մեկ սորոից, ինչպես այդ արվեց նաև սալորներին հետ:

Պտուղները մաքրում և հավասար մասերի էինք բաժանում: Որպեսզի սերկեվիլի կտորները լավ արտաքին ունենային, նրանց ծայրերը կտրատում էինք ատամնածե, ապա նրանց դնում սառը ջրի մեջ և երբ արդեն խաղողի հյութը եռում էր, նրա մեջ սերկեվիլները եփում էինք այնպես, ինչպես և սալորը:

ՄՈՒՐԱԲԱ ԲԱԼԻՑ ԵՎ ՀՈՆԻՑ

Այս տեսակի պտուղներից մեկ կիլոգրամին վերցնում էինք մեկ լիտր խաղողի հյութ, խտացրած մինչև 42% շաքարայնութեամբ: Մուրաբան եփում էինք սովորական ձևով, մինչև որ պտուղները սպեցիֆիկ փայլ ստանային:

ՄՈՒՐԱԲԱ ՂՎՈՒՄԻՑ

ԴՂՈՒՄԸ կտրատում էինք առանց կտորներին որևէ ձև տալու և 1,5 ժամ պահում էինք կրային լուծույթի մեջ: Դրա համար պատրաստում էինք կրային լուծույթ, վերցնելով մեկ կիլոգրամ դՂՈՒՄԻՆ կես կիլոգրամ կիր և այնպիսի քանակությամբ ջուր, որ դՂՈՒՄԻՆ վերին շերտը ծածկվեր լուծույթով:

ԴՂՈՒՄԸ կրային լուծույթով մշակելուց հետո այն լավ ըվանում էինք ջրով, խի հետո եփում այնպես, ինչպես նկարագրված է վերևում:

ՄՈՒՐԱԲԱ ԽԱՂՈՂԻՑ

Համեմատության համար խաղողի Ալախկի սորտից մուրաբա պատրաստվեց: Վերցրինք յուրաքանչյուր մեկ կիլոգրամ խաղողի պտուղներին մեկ լիտր խաղողի հյութ՝ խտացրած մինչև 42% չաքարայնությամբ: Մուրաբան եփեցինք այնպես, ինչպես վերևում հիշատակված պտուղների մուրաբան:

ՇԱՔԱՐԱԾՈ (ЦУКАТ) ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Շաքարածո պատրաստելու համար՝ դՂՈՒՄԸ կտրատում էինք նրան դանազան ձև տալով և 1,5 ժամ պահում կրի ստորև հիշված լուծույթի մեջ:

Մեկ կիլոգրամ դՂՈՒՄԻՆ վերցնում էինք 0,5 կգր. կիր և այնքան ջուր, որ կարելի լիներ ծածկել դՂՈՒՄԻՆ վերին շերտը:

ԴՂՈՒՄԻՆ կտորները կրի լուծույթով մշակելուց հետո դրանք լավ (մի քանի անգամ) ըվանում էինք սառը ջրով:

Շաքարածո ստանալու համար պատրաստված դՂՈՒՄԸ եփում էինք այնպես, ինչպես մուրաբան:

Շաքարածո պատրաստելու համար վերցնում էինք մեկ կիլոգրամ դՂՈՒՄԸ և մեկ լիտր խաղողի հյութ՝ մինչև 42% չաքարայնությամբ: ԴՂՈՒՄԸ եփում էինք այնքան, մինչև որ նրա կտորները չաքարածոյին հատուկ լիայլ ստանան, այդ նշանը ցույց էր տալիս, որ չաքարածոն պատրաստ է:

Պատրաստի չաքարածոն հանում էինք հյութից և 1—2 օր թողնում սեռյակում, չորանալու համար, որից հետո այն կարելի է երկար ժամանակ պահել արկղներում կամ պարկերում ու ցանկացած հեռավորության վրա այլ վայրեր փոխադրել:

ՍԵՐԿԵՎԻԼԻ ՇԱՅԱՐԱՆՈՒ

Սերկեվիլի ստուգները մտքում էինք ու կտրատում հա-
վասար մասերի: Որպեսզի սերկեվիլի կտորները լավ արտաքին
ունենային, դրանց ծայրերը կտրատում էինք առամնաձև ու
լցնում ստուր ջրի մեջ, որից հետո շարունակում էինք դրանք ե-
վել ախպես, ինչպես դրումից շաքարածո պատրաստելիս:

Գ.Գ.ՄԻ ԿՈՄՊՈՑ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Դրումը կտրատում էինք առանց կտորներին սրեք ձև տա-
լու, ախպես, ինչպես այլ անում էինք մուրաբա կամ շաքարա-
ծոներ պատրաստելիս: Կտրատված դրումն այնուհետև մեկ ժամ
վա ընթացքում պահում էինք կրային լուծույթի մեջ: Մեկ կի-
լոգրամ դրմն վերցնում էինք վերևում հիշված քանակու-
թյամբ կիր: Կրային լուծույթում պահված դրմն կտորները
լավ լվանում էինք ջրով և 550—600 գրամ քաչով դարսում թի-
թեղյա բանկաների մեջ: Միաժամանակ առանձին տաքացնելով
խտացնում էինք խաղողի սպիտակ հյութը՝ մինչև 50% շաքա-
րայնությամբ:

Պատգած խաղողի հյութը տաք վիճակում լցվում էր բան-
կաների մեջ, գդմն կտորների վրա, որի համար մոտ 250—300
գրամ հյութ էր ծախվում:

Յուրաքանչյուր բանկայի մեջ պցում էինք նաև մեխակի եր-
կուներք հատիկ, բանկաները թափահարելուց հետո դրանք 45
րոպեի ընթացքում ստերիլիզացիայի էինք ենթարկում և ապա
սպոնցնում:

Պաղողի հյութը, որ վերցված էր վերահիշյալ բոլոր տեսակի
մթերքները պատրաստելու համար, ենթարկվեց անալիզի, որ-
պեսզի որոշվեր նրա բաղադրությունը (շաքարի, թթվություն
առիճանը, տեսակարար կշիռը և այլն):

Պատրաստի անպամթերքը բոխական անալիզից բացի նաև
համտես անելու միջոցով զնահատման էր ենթարկվում մասնա-
զետներից կազմված հատուկ հանձնաժողովի կողմից:

ԽԱՂՈՂԻ ՀՅՈՒԹՈՎ ԿՈՆՍԵՐՎՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ՎԵՐՑՎԱՆ ՀՈՒՄՔԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Սպոր-դեղնաշյուր (Prunus Domestica Z) · Շատ բուսարան-
ների կարծիքով այժմյան սալորի բոլոր ծառերի նախատիպը

եղել են հետևյալ տարբերակները— *Prunus Domestica*, *Prunus sustitia*, *Prunus spinosa*, *Prunus Ussuriensis* և *Prunus nigra*, որոնք վայրի վիճակում աճում են Հարավային Կովկասում, Հյուսիսային Իրանում, Բալխանյան թերակղզում և այլն: Դեռ սովետական ժամանակներում դրանք շատ լայն տարածված կուլտուրաներ են եղել Ասորիքում, Ժանապանդ Գամասկոսում:

Ամենահին և լավ սորտ է համարվել Գամասկոսի սալորը: Երկայտուժն Վրաստանում դեռ կա վայրի, դեղնագույն սալոր, որին Գամասիի են անվանում: Ամենայն հավանականությամբ այդ անունն այնտեղ է անցել Գամասկոսի սալորից:

Նվրտագիները սալորն Ամերիկա տարան վերջինի հայտնագործությունից հետո:

Ռուսաստանում սալորի կուլտուրայի տարածման վերաբերյալ տեղեկություններ կան, որ այն 1564 թվականին բերվել է Արխանգելսկի վրայով:

Ներկայումս սալորի կուլտուրան չափազանց շատ է տարածված և մի քանի սորտեր ունի: Կովկասում այն պատահում է Սոչու շրջանում, Արխաղթայի ԱՍՍՌ-ում, Հայկական ՄՄՌ-ում:

Դեղնաշյուրը պատկանում է *Prunus Domestica* տեսակին: Այն աճում է Ադրբեջանում, Վրաստանում և առանձնապես շատ է Հայաստանում:

Հայաստանում դեղնասալորը տարածված է Արարատյան դաշտի շրջաններում, այլևի բիչ քանակությամբ—նաև Մեղրու շրջանում:

Արարատյան դաշտի շրջաններում դեղնասալորը հասունանում է սկսած հունիսի վերջից մինչև սեպտեմբերը:

Պատուկները ձվաձև են, մանր, կանաչավուն-դեղնագույն, լիովին հասունացած վիճակում—դեղնապույն, ծածկված են դեղեցիկ մոմադույն փառով, հաճելի քաղցրաթթու համ ունեն:

Պատուկների բիմբական կապը — ինփերա շաքար 6,93%, թթվություն—1,73%:

Մարդների օլտագործումը կոմպոսիտներ և դրանց վերամշակման այլ պրոդուկտներ պատրաստելու համար՝ հայտնի է սովետական ժամանակներից: Դեռ հեռավոր ժամանակներում սալորները մեծ դեր էին խաղում բժշկության մեջ՝ որպես դիետիկ և թերապևտիկ միջոց:

ՍԵՐԿԵՎԻԼ (Cydonia vulgaris Pers.)

Սերկեվիլը հարավային պտղատու կուլտուրա է:

Դեկանդուրի կարծիքով սերկեվիլի հայրենիքը Իրանի հյուսիսային մասն է, Կասպյան ծովի ափերը, Անատոլիան—(հյուսիսային սահմանը), վերջապես Կիպրոս կղզու Սիդոն քաղաքը, ուր աճել են սերկեվիլի լավագույն սորտերը և որտեղից առաջացել է Սիդոնիա անունը:

Սերկեվիլը լայնորեն տարածված է նաև Ղրիմում ու Կովկասում:

Հայաստանում սերկեվիլն աճում է Մեղրու, Ալավերդու, Իջևանի, Նոյեմբերյանի, Էնչպես նաև Արարատյան դաշտի չրջաններում: Սերկեվիլն առանձնապես լավ է աճում Մեղրու, Ալավերդու և Իջևանի չրջաններում:

Թարմ վիճակում դործածելու համար սերկեվիլը քիչ է պլտանի, այն օդտազործվում է զլխավորապես մուրբա, կոպտաներ, շաքարածոներ և այլ միջերջներ պատրաստելու համար:

Սերկեվիլի կոնսերվաները հիանալի համ են ունենում:

Սերկեվիլի պտուղների քիմիական բաղադրությունը՝

Չուր	Չուժվող նյութեր	Ինվերտ շաքար	Ընդհանուր թթվություն	Դարազանյութեր
81,0 %	6,91 %	9,0 %	1,59 %	0,53 %

Ըստ հասունացման ժամանակի՝ դոյություն ունեն սերկեվիլի աչնանային և ձմեռային սորտեր: Սերկեվիլի աշնանային սորտերի բերքահավաքը սովորաբար կատարվում է հոկտեմբերին, նույնիսկ նոյեմբերին, տերևաքափի թամանակաշրջանում: Հավաքված սերկեվիլը մինչև դործածելը պետք է բավական երկար ժամանակ պահվի՝ մի փոքր փափկանալու համար:

Սերկեվիլի պտուղների և դրանց վերամշակումից ստացվող սննդամթերքների բուժական կիրառությունը բավական լայն է: Հին աշխարհի համարյա բոլոր բժիշկները խորհուրդ էին տալիս սերկեվիլի դանազան տեսակները դործածել աղիքային հիվանդությունների, փորհարկների, դեղինտերիայի, սրտխառնոթյան ու այլ մի շարք դեպքերում:

Պետք է նշել, որ նորագույն ժամանակներում պատշաճ ու-

չարքությունն չի դարձվում սերկեկի՛ք՝ յուժեղ նշանակության վրա:

ԲԱՆ. (Prunus Cerasus)

Բայլի կուլտուրան հասնում է 65° հյուսիսային լայնության տակ: Այն շատ տարածված է Նովոդեոդիլ, Վլադիմիրի, Գորկու և այլ ուայոններում, Ուկրաինայում, Կովկասում, Ղրիմում, Միջին Պովոլժեյում: Հայաստանում բալենին հանդիպում է բուր չըջաններում, առանձնապես շատ է հյուսիսային չըջաններում (Կիրովականի, Ստեփանավանի և այլն):

Ներկայումս վայրի վիճակում բալենիներ են աճում ամբողջ միջին և հարավային ՍՍՌՄ-ի անտառներում, Ղրիմում, Կովկասում և ամբողջ արևմտյան Եվրոպայում: Վայրի բայը լինում է երկու տեսակի. սև և բաց կարմիր:

Հայաստանում աճող բայի ջրմիական բաղադրությունը հետևյալն է՝

Չուր	Չոր նյութեր	Շաքարի քնդ. բանակը	Գլյուկոզ	Ֆրուկտոզ	Թաղանթանյութ	Տիարվող թթվ. քսանձորաթ	Սոխիք
78,01	21,96	10,56	5,86	4,31	0,60	2,10	0,71

Բայը միջին դարերում դործադրվում էր քարախտի և միզանցքերի հիվանդությունները բուժելու համար:

ՀՈՆ (Cornus moscula Z)

Հոնը վայրի վիճակում առատորեն աճում է Ղրիմում, Կովկասում, Միջին Ասիայում և արևմտյան Եվրոպայի ամբողջ հարավում:

Հայաստանում հոնը տարածված է անտառային մացառուներում—հյուսիս-արևելյան չըջաններում (Ալավերդու, Իջևանի, Շամշադինի չըջաններում), ինչպես նաև Մեղրիում, ուր հոնի բարձրորակ, մտոտ փոխիականներ են աճում:

Հոնի թարմ պտուղները ջրմիական բաղադրությունը ցույց է տրված հետևյալ աղյուսակում.

Չուր	Չոր մասերը	Ընդհանուր շաքարներ	Տիարվող թթվություն	Մոխիր
77,56	22,14	10,32	8,26	0,98

Դեռ հնագույն ժամանակներում (ըստ Գալենի) հոնը դործ-
էին ածում իբրև մածուցիչ միջոց. հետագայում Սալերի շիրտան-
հաստատեց այդ հատկությունը:

Ըստ Բախինի, հոնից պատրաստում էին կոնսերվաներ, որ-
ով բուժում էին մայրխան, այն դործ էին ածում նաև հի-
վանդների ախորժակը բարելավելու համար:

Ներկայումս հոնից պատրաստում են կիսեղ, որը դործ են
ածում երեխաների ստամոքսային հիվանդությունների դեմ:

ԴՊՈՒՄ (Cucurbita pepo Z)

Դդմի սորտերի բազմադանության հետևանքով պոլությունե-
ունեն տարբեր կարծիքներ նրա արժանիքների մասին:

Դդումը ալելի շատ դնահատուկ է, որպես անասնակերի
կուլտուրա և այն նույնիսկ ալելի բարձր է դնահատվում, քան
կերի ճակնդեղը:

Ինչ վերաբերում է դդմի սեղանի տեսակներին, նրանցից
պետք է հիշատակել հետևյալները՝

Մեղրային — պտուղները դնդաձև են, մի փոքր տափակած,
թույլ սեղմննալորված, միայն միջին սնդուլթյուն ունի: Վա-
ղահաս սորտ է, միջին դիմացկունությամբ:

Մերկաաբամ — պտուղները տափակած են, սեղմննալոր-
ված նախշերով, դույնը բաց դեղնավուն, նախշերը — կանաչ,
միայն թեթևալոր: Հասունանում է վաղ ժամկետներում, ունի մի-
ջին դիմացկունություն:

«Վարժյան գորշ» — պտուղներն անկանոն — դնդաձև են, դոր-
շալուն — ալիտակալուն դույնի, միայն փանիչակազույթ է: Այս
սորտն աչքի է ընկնում բարձր բերքատվությամբ, և լավ շա-
քարայնությամբ:

«Մազալեակայա» — պտուղները ձվաձև են, սեղմննալորված,
չերտալոր նախշերով, դույնը դեղնադույն, նախշերը կանաչ,
միայն թեթևալուն: Այս սորտը հասունանում է միջին ժամկետնե-
րում, լավ պահունի սորտ է:

«Պերիտվաակա» — պտուղները երկարավուն են, տանձի ձև
ունեն, խիստ թույլ են սեղմննալորված, դարչնադույն են,
անընդմեջ ցանցի ձև ունեցող նախշերով, միայն սկզբն է, նուրբ,
ուչ հասունացող սորտ է: Աճեցվում է հարավային-բոստանային
ոայրներում, պտուղները պահվելու տեսակետից միջին դիմաց-
կունություն ունեն:

վերևում նկարագրված դրժի սորտերից «Մեղրայինը» և «Պերեխվատկան» լավագույններն են՝ մուրաբա, կոմպոտներ և շաքարածոներ սրատրաստելու համար:

Ըստ մեր որոշումները դրժի այդ սորտերի քիմիական բաղադրությունը հետևյալն է՝

Սորտ	Ջուր	Խնվերու շաքար	Թթվու- թյուն	Քաղանթա- նյութ	Մսիկը
„Մեղրային“	93,93% ₀	4,54% ₀	—	0,69% ₀	0,47% ₀
„Պերեխվատկա“	93,30% ₀	4,05% ₀	—	0,71% ₀	0,60% ₀

Դրումը նաև զգալի քանակությամբ C վիտամին է պարու-
նակում:

Դրժի բուժական կիրառությունը երևում է հետևյալ ավյալ-
ներից.

Կիևում՝ բժիշկ Կոլեսևու կատարած հետազոտությունների
համաձայն դրումը ներգործում է որպես մեղր վանող միջոց
խրոնիկական նեֆրիտի դեպքում. նրա ազդեցությունը արտա-
հայտվում է նրանով, որ ավելանում է մեզի արտաթորումը,
ավելանում է աղերի արտաթորումը և քչանում են սուուցքնե-
րը, բացի այդ դրումը թուլացնում է նաև ստամոքսը:

ՓՈՐՁԻ ԱՐԿՅՈՒՆՔՆԵՐԸ

Մեր փորձերում խաղողի հյութով պատրաստված բոլոր ա-
նալիոհոլ սննդամթերքները հաջող դուրս եկան: Պտուղների նախ-
նական մշակման լավագույն եղանակ պետք է համարել՝ դրանք
ծծմբով գունազերծ անելը: Ծծմբով գունազերծ արված պտուղ-
ներից՝ խաղողի հյութով պատրաստված մուրաբան բոլոր դեպ-
քերում խիտ հաճելի համ էր ունենում: Դրանցից պոչաբի համ
չէր դաջվում: Մուրաբայի հյութը թափանցիկ էր, մեծ տոկո-
սով շաքար և օրգանական նյութեր էր պարունակում (տես № 1
և 2 աղյուսակները):

Ծծմբի գործածությունը ոչ մի վնասակար ազդեցություն չի
թողնում, որովհետև ծծումբը պործ է ածվում փոքր դոզաներով
(մեկ լիտր հյութին ընդամենը միայն 12,6 միլիգրամ), մինչդեռ
թույլատրվում է ստանդարտով գործածել 20 միլիգրամ:

Խաղողի հյութով պատրաստված կոնսերվաները հետադուս-
լիս ստացվել են հետևյալ արդյունքները:

Բացի դեղնաչլորից, մնացած պտուղներից պատրաստվող
մուրաբան եփվում էր առաջին եղանակով՝ այսինքն ծծմբով
մշակված հյութով: Իսկ դեղնաչլորը այնպիսի հյութով, որը
ստացվել էր վերևում հիշատակված եղանակներով: Եթե համ-
մատենք դեղնաչլորի մուրաբայի բոլոր տեսակները, կտեսնենք,
որ դրանց մեջ կա հետևյալ տարբերությունը:

ՄՈՒՐԱԲԱ ԴԵՂՆԱՇՆՈՐԻՑ

1. Առանց պտուղների նախնական մշակման պատրաստված
մուրաբան՝ դուրս եկավ ցածր որակի, մուգ գույնի, դուշարի
համով:

2. Դեղնաչլորի այն մուրաբան, որը խաղողի հյութով էր
եփված ըստ երկրորդ եղանակի, այսինքն խաղողի ողկուղիները
սաք ջրի մեջ դնելուց հետո, նույնպես դուրս եկավ ցածր որա-
կի: Այդ մուրաբան թափանցիկ չէր, պտուղները չէին պահպա-
նել իրենց արտաքին ձևը և կորցրել էին բուրմուռը:

3. Դեղնաչլորի այն մուրաբան, որն եփվեց հյութ պատրաս-
տելու համար օգտագործվող խաղողը ծծմբով մշակելուց հետո,
դուրս եկավ հիանալի, թափանցիկ գույնով, լավ համով ու հո-
տով: Դժվար է ասել, որ այն պատրաստված է ոչ թե շաքարով
այլ խաղողի հյութով:

Ընդհանրապես համեմատելով այս երեք եղանակները, լա-
վադույնը պետք է համարել դրանցից երրորդը (ծծմբով մշա-
կումը), դրա համար էլ մենք ուրիշ պտուղներից մուրաբաներ և
շաքարածոսներ պատրաստելիս միշտ նախընտրելինք այդ (երրորդ)
եղանակը:

ՄՈՒՐԱԲԱ ՍԵՐԿԵՎԻԼԻՑ

Սերկեվիլի մուրաբան դուրս եկավ լավ որակի, թափանցիկ,
հիանալի համով ու հոտով:

ՄՈՒՐԱԲԱ ԲԱԼԻՑ

Բալից պատրաստված մուրաբան ունեւ հիանալի մուգ-կար-
միր գույն, շատ համեղ էր, քաղցր, մի փոքր թթվաչ:

ՄՈՒՐԱԲԱ ՀՈՆԻՑ

Հոնի մուրաբան ունի որչա պակաս բարձր որակ, հիանալի համ ու հոտ:

ԴԴՄԻ ՄՈՒՐԱԲԱՆ

Ունի հաճելի համ, դուրեկան՝ դործածության համար:

ՇԱՔԱՐԱԾՈՒ ԴԴՄԻՑ

Շաքարածոնների առավելությունը նրանց բարձր սննդաբարու-թյունն է և նրանց փոխադրման ու պահպանման հարմարու-թյունը:

Շաքարածոները դեպքերային սննդամթերքներ են:

Դրանք տնտեսական տեսակետից օգտակար են նաև այն պատճառով, որ քիչ խաղողահյութ ծախսելով, կարելի է մեծ քանակությամբ շաքարածոներ ստանալ:

Շաքարի 42% խտություն ունեցող մեկ լիտր խաղողի հյութից և չորս կիլոգրամ մաքրված դեմից ստացվում է մինչև երկու կիլոգրամ շաքարածո:

ՇԱՔԱՐԱԾՈՒ ՍԵՐԿԵՎԻԼԻՑ

Սերկեվիլից պատրաստված շաքարածոն լավ համ ու հոտ ունի: Նման շաքարածոները կարելի է դործ ածել կոնֆետների փոխարեն: Դրանք խիստ սննդարար են, լավ ու երկար են պահպանվում:

ԴԴՄԻ ԿՈՄՊՈՏ

Դեմից պատրաստվող կոմպոտն ունի հիանալի դույն, թափանցիկ է, լավ համով ու հոտով, հեռույը բաղադրությունը տեսակարար կշիռը— 1169, շաքարը— 42%, թթվությունը— 0,51 տոկոս:

1941 թվականի դեկտեմբերի 9-ի պաշտոնական համառոտ (դեդուտացիայի) ժամանակ շաքարածոները և մնացած սննդամթերքները ստացան շատ բարձր գնահատական՝ 4—5 թվանշան (5 բալանի սխեմայով):

Խաղողի հյութով պատրաստված կոնսերվանների բաղադրու-թյան մասին կարելի է դատել քիմիական անալիզի տվյալներից, որոնք արված են ստորև բերված № 1, 2, 3 և 4 աղյուսակնե-րում:

Աղյուսակ № 1

ՏԱՐԻՆԸ ՊՏԱՂԱՅՈՒԹՅՆԻ ՔԻՄ. ԲԱՆԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ստորակերտ անոթներ	Կոմպոնիտ	Շառահարկ	Տեսակարար	Երկաթի քանակ	Սուլֆուրի քանակ								
Բեղին անոթ	Կոնսորտ	3,22	1021	48,8	0,44	0,12	50,8	49,2	1,18	5,4			
»	H ₂ O	1,39	1022	46,3	1,20	0,12	50,0	50,0	2,02	8,8			
»	SO ₂	3,26	1032	78,1	0,73	0,12	80,1	19,9	1,38	4,0			
Սեղիկակ	SO ₂	6,08	1020	47,3	1,22	0,19	49,0	51,0	1,20	6,0			
Խաղողի էլեկտր	SO ₂	6,33	1013	52,7	0,45	0,10	57,5	42,5	1,28	1,0			
Գրգռ	SO ₂	5,80	1015	47,6	0,40	0,14	50,3	49,7	1,18	6,2			

Աղյուսակ № 2

ՏԱՐԻՆԸ ՊՏԱՂԱՅՈՒԹՅՆԻ ՔԻՄ. ԲԱՆԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ստորակերտ անոթներ	Կոմպոնիտ	Շառահարկ	Տեսակարար	Սուլֆուրի քանակ	Սուլֆուրի քանակ	Սուլֆուրի քանակ (SO ₂) սերտացման երբ		Կապիտալ	
						Ընդհ.	Ազատ		
Բեղին անոթ	Կոնսորտ	1032	1022	75,5	1,12	0,16	5,8	7,522	52,660
»	SO ₂	1030	1030	73,8	1,57	0,67	9,0	10,030	94,970
Սեղիկակ	SO ₂	1040	1040	64,8	0,82	0,17	1,0	12,538	100,302
Խաղող-Ալախիկ	SO ₂	1017	1017	73,9	0,69	0,14	3,2	10,084	61,690
Գրգռ	SO ₂	1032	1032	75,5	0,55	0,16	10,0		

Ա. ԱՊՐԱՍԻ ԱԶ 3

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊՏՈՒՂՆԵՐԻ ՔԻՄ. ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Սորաի անունը	Տեսակարար կշիռ	Շաքար	Քիմիական օր. օր.	Դաբարդանյութեր	Զուգական նյութ.	Մոխիր	Սորերի ալկալիական քիմիական	Պինդ մնացորդ	Զուր
Բալ	1016	63 0/0	2,20	0,12	2,54	1,36	11,2	75,0	25,0
Հոն	1015	55 0/0	2,60	0,15	2,40	1,46	12,0	70,5	29,5

Ա. ԱՊՐԱՍԻ ԱԶ 4

ՇԱԲԱՐԱԿՈՆԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Սորաի անունը	Տեսակարար կշիռ	Շաքար	Քիմիական օր. օր.	Դաբարդանյութ.	Պինդ մնացորդ	Զուր	Մոխիր	Սորերի ալկալիական քիմիական
Դղում	1016	75,0	2,20	0,09	6,40	86,0	14,0	6,72
Սեղիկիկ	1022	73,5	2,40	0,23	6,80	77,5	22,5	7,00

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Շաքարի փոխարեն՝ խաղողահյութով պատրաստվող այս մթերքների ժողովրդա-անտեսական նշանակությունն անսխալ է: Այսպիսով հնարավորություն է լինում ընդլայնել սննդանյութերի առուրտի մեծությունը և ալկալիցները բանակի ու բնակչության մատակարարումը—բարձր սննդարարություն ունեցող կենսամթերքներով:

Շաքարի փոխարեն խաղողի հյութով նոր տեսակի սննդանյութեր պատրաստելու հաջող փորձերը թույլ են տալիս առաջարկելու արտադրական պայմաններում մասսայական քանակությամբ պատրաստելու նոր տիպի մուրաբաներ, շաքարածոներ, կոմպոսիտներ և հրուշակային այլ մթերքներ:

Վերահիշյալ մթերքները մասսայաբար արտադրելու համար կարևոր է օգտագործել խաղողի վակուում-հյութը:

Խաղողի հյութով պատրաստված մթերքները իրենց սննդային հատկություններով չեն դիմում այն մթերքներին, որոնք պատրաստվում են ռաֆինաց շաքարով: Պետք է հուսալ, որ

Կոնսերվորենաւը և հրուշակային ֆարբիկաները իրենց արտա-
դրութեան մեջ կսկսեն լայն շարժում գործադրել շաքարի վոխա-
բինուժը խաղողի հյութով: Այդ հնարակորութիւնը կտա Կար-
միր Բանակի և մեր բնակչութեան մատակարարման գործը ա-
վելի բնդլայնել, ալելի բարելավել:

ЛИТЕРАТУРА

1. Проф. С. Ф. ЦЕРЕВИТИНОВ и Л. В. МЕТЛИЦКИЙ—Товароведение овощей и плодов и продуктов их переработки. Госторгиздат. Москва 1939 г.
2. Проф. Ф. В. ЦЕРЕВИТИНОВ—Химия свежих плодов и овощей. Сельхозгиз.
3. Проф. д-р А. ВЕЙТЕН—Лабораторная книга для химиков пищевой промышленности. Пищепромиздат, 1937 г.
4. Проф. А. М. ФРОЛОВ-ВАГРЕЕВ и Г. Г. АГАБАЛЯНЦ—Химия и ее методы исследования продуктов переработки винограда. Снабтехиздат—1933 г.
5. Н. Э. УМИКОВ, доктор медицины—Врачебное применение плодов, ягод и овощей с древнейших времен, Грузбиомедгиз, Тбилиси, 1938 г.



ԿՃ 01051. Պատվեր 225. Տիրաժ 1000. Տպագրական 1/8 մամ. Մեկ
մամուլում 38400 նշան. Հեղինակային 0,8 մամ. Ստորագրված է
տպագրութեան 30/III-48 թ.

Հայկեանքատի տպարան, Երևան

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

16-րդ էջի № 1 աղյուսակի առաջին սյունյակի ներքևից 2-րդ տողը սպառ ըլած է «Պատրիկ հյուսթ» պետք է լինի «Պատրիկ-Ալախկի»:

17-րդ էջի № 4 աղյուսակի 6-րդ սյունյակի ըստ թողած տեղում պետք է լինի «Զլուծված հյուսթ»:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0007965

ԳԻՆԵ 1 Ռ.

A $\frac{11}{19394}$

Н. К. АРУТЮНЯՆ
Использование виноградного сока
для приготовления
различных консервов
(На армянском языке)
Аргив—1943